ՖՐԱՆՍԵՐԵՆԻ՝ ՈՐՊԵՍ ԵՐԿՐՈՐԴ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Արմինե Բաբայան

XXI- րդ դարը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի հայտարարության համաձայն, հռչակվել է բազմալեզու դարաշրջան: Այսօր մեկ օտար լեզվի իմացությունը բավարար չէ ժամանակակից արհեստավարժ մասնագետի համար: Նույնիսկ ամենապատվավոր ու անվանի վարպետն իր աշխատանքային գործունեության մեջ օգտագործում է մի քանի գործիք: Եվ լեզուն՝ որպես մշակույթների համագործակցման ու մերձեցման գործիք, արդի դարաշրջանում նոր ուղիներ ու ասպարեզներ է բացում այդ գործընթացն ավելի արդյունավետ կերպով իրականացնելու համար: [1]

Ֆրանսերենը, որը 17- րդ դարից սկսած համարվում էր միջազգային դիվանագիտական հարաբերությունների և եվրոպական բարձրաշխարհիկ խավի գերիշխող լեզու, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո իր տեղը զիջեց անգլերենին: Սակայն այսօր էլ ֆրանսերենն ունի համամոլորակային գործածության աշխարհագրություն, այդ լեզվով խոսում են աշխարհի գրեթե բոլոր ծայրերում՝ ավելի քան 130 մլն մարդ: Այն ՄԱԿ-ի պաշտոնական լեզուներից մեկն է: Ֆրանսերենը, սկսած 1896 թ. օլիմպիական խաղերի պաշտոնական լեզուն է: Յուրաքանչյուր տարի այդ լեզվով անց են կացվում տասնյակ միջազգային կոնֆերանսներ՝ նվիրված բժշկագիտությանը, փիլիսոփայությանը, իրավագիտությանը, լեզվաբանությանը, նորագույն տեխնոլոգիաների զարգացմանը և այլն:[2]

Թվային տեխնոլոգիաների և գիտության բուռն զարգացման դարաշրջանում մի քանի օտար լեզուների իմացությունը դարձել է հանապազօրյա անհրաժեշտություն:

Գիտականորեն ապացուցված է, որ ցանկացած մարդ կարող է ազատ տիրապետել երկու-երեք լեզուների:

Օտար լեզուներ ուսումնասիրելու համար նախ և առաջ անհրաժեշտ է ունենալ մոտիվացիա և հետաքրքրվածություն: Այն կարող է լինել զուտ մասնագիտական, կամ էլ՝ հենց ֆրանսերենի դեպքում, ռոմանտիկ: Բոլորին է հայտնի մի շատ տարածված արտահայտություն՝. ֆրանսերենը սիրո լեզու է: Այս փաստը անպայման ունենում է հաջողություն, քանզի այն, ինչ որ հաճույք է պատճառում, շատ դյուրին է ընկալվում: Բացի այդ, օտար լեզվի իմացությունը դա մի անսպառ հարստություն է, որը մարդուն ոչ միայն ինտելեկտուալ, այլ նաև տնտեսական շահույթ ու առաջխաղացում է բերում:[3]

ԱրՊՀ – ում ֆրանսերենը որպես երկրորդ լեզու դասավանդվում է արդեն քսան տարի: Ուսանողները հիմնականում մեծ հետաքրքրություն են դրսևորում:

Երկարամյա աշխատանքային գործունեության արդյունքում ինձ հաջողվել է ձեռք բերել որոշակի հմտություններ, որոնք հնարավորություններ են տալիս երկրորդ օտար լեզվի ուսուցման պրոցեսը դարձնելու ավելի հետաքրքիր ու գրավիչ:

---

* Հոդվածն ընդունվել է 24.02.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գերմաներեն և ֆրանսերեն լեզուների ամբիոնը:

Հիմա մի քանի սկզբունքների մասին, որոնք չափազանց անհրաժեշտ են ֆրանսերենի ուսուցման ընթացքում:

1. Նոր նյութը մատուցել այնպես, որ այն ընկալվի բոլոր ուսանողների կողմից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նույնիսկ կրկնել այն:

2. Յուրաքանչյուր դասին աշխատել այնպես անել, որպեսզի բոլոր ուսանողները ընդգրկվեն դասապրոցեսում:

3. Ուսանողին խրախուսել նույնիսկ սխալ պատասխանի համար: Քանզի չի սխալվում նա, ով ոչինչ չի անում:

4. Լսարանում ստեղծել առողջ և ստեղծագործական մթնոլորտ: Դասախոսը պետք է ունենա լավ առոգանություն, խոր գիտելիքներ տվյալ օտար լեզվից և շարունակաբար կատարելագործի դրանք:

Ապացուցված է, որ երկրորդ լեզվին տիրապետելը ավելի քիչ ջանքեր և ժամանակ է պահանջում, քան առաջին օտար լեզվին տիրապետելը: Ինչքան շատ օտար լեզուների է տիրապետում մարդը, այնքան զարգացած են նրա հիշողությունը, տեսողական և լսողական զգացողությունը:

Ֆրանսերենի որպես երկրորդ օտար լեզվի դասավանդման վրա մեծ ազդեցություն են գործում անգլերենի՝ որպես առաջին օտար լեզվի և ֆրանսերենի լեզվական նմանությունները և տարբերությունները:

Դասապրոցեսի ժամանակ ուսանողը ֆրանսերեն անծանոթ բառը կարող է գուշակել այն տարբերակելով անգլերեն համարժեք բառից:

Օրինակ՝ interest(անգ). – intérêt (ֆրանս.)
isle (անգլեր.) – ile (ֆրանս.)
arrest(անգ.) – arret (ֆր.)
theatre(անգլ.) – théatre (Ֆր)

Կան բառեր, որոնք ունեն ոչ այնքան նման արմատ.

Օրինակ՝ école (ֆր) – school(անգլ.)
étranger (ֆր)- stranger (անգլ.)
étudiant (ֆր) – student (անգլ.)

Բառակազմության մեջ կարելի է ընդգծել նախածանցների կամ վերջածանցների նմանությունը.

Օրինակ՝ - ment:
movement (անգլ.) le mouvement (ֆր.)
governement (անգլ.) – le gouvernement (ֆր)

- tion, - ation, - sion:
revolution – la rèvolution
administration – l`administration
tension – la tension

Անգլերենի dis – ժխտական նախածանցը համարժեք է ֆրանսերենի de, des, dis ժխտական նախածանցներին:

Օրինակ՝ like- dislike (անգլ.) – plaire- déplaire, appear- disappear(անգլ.)- apparaitre– disparaitre (ֆր).

ժխտական im, in նախածանցները համարժեք են երկու լեզուներում:

Օրինակ՝ possible- impossible
definite- indefinite

re – նախդիրը և անգլերենում և ֆրանսերենում ցույց է տալիս գործողության կրկնություն կամ վերսկսում.

Օրինակ՝ view- review, touch-retouch (անգլերեն)
lire- relire, faire-refaire (ֆրանսերեն)

- age վերջածանցը ևս համարժեք է երկու լեզուներում: Սակայն գոյություն ունի արտասանության տարբերություն:

Voyage [waja: ç] - voyage[‘voidç]
village [vila: ç] - village [‘vilidç]
passage [pasa: ç]- passage [‘pæsidç]

Քերականության մեջ հարկ է նշել ընդհանրությունները, որոնք գոյություն ունեն և՛ անգլերենում և՛ ֆրանսերենում:

օրինակ՝ հոգնակի թվի կազմության դեպքում երկու լեզուներում օգտագործվում է հիմնականում – s վերջածանցը՝

a table –tables / անգ./
la table –les tables / ֆրանս./

Անհրաժեշտ է նշել, որ որոշ դեպքերում հոգնակի թվի գործածությունը կարող է փոխել բառի իմաստը:

Օրինակ՝
l’actualité-իրականություն
les actualités- լուրեր

Սեռի մասին խոսելիս կարելի է որպես համեմատության հենակետ վերցնել ռուսերենը, քանի որ անգլերենում սեռը գոյություն չունի:

Օրինակ՝ la mère-мать
le père-отец

Անգլերենում և ֆրանսերենում գոյականը հանդես է գալիս հոդի հետ: Ի տարբերություն անգլերենի, ֆրանսերենում հոդն ունի ավելի շատ ձևեր՝un,une,des,le,la,les,du,de la,de l’,du,des,au,aux.

Անգլերենում հոդը ցույց է տալիս գոյականի թիվը և որոշված կամ անորոշ լինելը, իսկ ֆրանսերենում նաև արական և իգական սեռը, որոշակի քանակը, պատկանելությունը,տեղը և այլն:

Օրինակ՝ le livre du /de + le/ professeur. /du միացյալ հոդը ցույց է տալիս պատկանելություն/

Il va au /à + le /lycée /տեղ/

Il achète du pain /du մասնակի հոդը ցույց է տալիս որոշակի քանակ/:Գոյություն ունեն հոդի օգտագործման ընդհանրություններ և տարբերություններ:Հատուկ անուների հետ և՛ անգլերենում և՛ ֆրանսերենում հոդը չի օգտագործվում:

Օրինակ՝ London –Londres
Pete -Paul
Բայց՝ Little Pete-Le petit Paul
La France, le Havre

Բայական ժամանակաձևերից կարելի է նշել բարդ ժամանակաձևերի կազմության նմանությունները:

Օրինակ՝ Անգլերենի “Present perfect և ֆրանսերենի passռ composռ ամանակաձևերը կազմվում են have /անգ./ և avoir /ֆրանս./ օժանդակ բայերով և խոնարհվող բայի հարակատար դերբայով:

Օրինակ՝ I have done. j’ai fait ֆրանսերենում որոշ շարժում ցույց տվող ոչ անցողական բայեր իրենց passé composé ժամանակաձևը կազմում են “etre” օժանդակ

բայի հետ:Այս դեպքում կարելի է համեմատել "continuous"անգլերենի ժամանակաձևի հետ:

Օրինակ՝ Il est parti-He is reading.

Անհրաժեշտ է սակայն նշել, որ ֆրանսերենում հարակատար դերբայը համաձայնում է ենթակայի հետ թվով և սեռով, երբ այն խոնարհվում է etre -ի հետ և, ուղիղ խնդրի հետ, եթե այն գտնվում է դերբայից առաջ, avoir օժանդակ բայի դեպքում:

Օրինակ՝ Elle est partie

Ils sont partis

Les fleurs, je les ai achetées

Հարցական նախադասության կազմության համար անգլերենում և ֆրանսերենում գործածվում է ինվերսիան /շրջված շարադասությունը/:

Օրինակ՝ He is playing –Is he playing?

Il marche. –Marche –t- il?

Ֆրանսերենի դասավանդման հիմնական դժվարությունները հնչյունաբանական տարբերություններն են,որոնք գոյություն ունեն անգլերենի և ֆրանսերենի միջև: Սակայն ժամանակակից տեսողական և լսողական միջոցների, երկխոսությունների օգտագործման, ֆրանսերեն ֆիլմերի դիտման ու դրանց քննարկման շնորհիվ հնարավոր է ուսանողների մոտ ձևավորել ֆրանսերեն հնչողության և արտասանության զգացողություն ու ընդունակություն, որն էլ հետագայում կվերափոխվի սովորույթի:

Այսպիսով՝ հիմնվելով առաջին օտար լեզվի՝անգլերենի վրա՝ կարող ենք հասնել էական ավելի դրական արդյունքների՝ օգտագործելով համեմատության սկզբունքը ֆրանսերենի՝որպես երկրորդ օտար լեզվի դասավանդման պրոցեսում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Djulhakian M.G., Gharibian A.H., France –cours de civilisation. Edition de L'Université D'Yérévan. Yérévan, 1991 p. 9
2. Civilisation progressive du français. Ross Steele.CLE International 2002, p.78
3. Նույն տեղում, էջ 82:
4. Gak V. Dictionnaire français-russe. M., 2002.
5. Ասմանգուլյան Հ.Ա., Անգլերեն-հայերեն բառարան, Եր., 1984:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ֆրանսերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի դասավանդման առանձնահատկությունները

Արմինե Բաբայան

Հոդվածում քննության են առնված ֆրանսերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի,դասավանդման առանձնահատկությունները ԲՈՒՀ-երում,համեմատելով անգլերենի՝ որպես առաջին օտար լեզվի,հետ: Այդ առանձնահատկութբունները դասակարգված են ըստ լեզվաբանական բաժինների՝ հնչյունաբանական, քերականական և բառագիտական: Յուրաքանչյուր տեսական սահմանում հիմնավորված է գործնական օրինակներով՝ հեշտացնելով դասավանդվող նյութի յուրացումը:

Բանալի բառեր՝ *լեզվի իմացություն, տիրապետել որևէ լեզվի, ձեռք բերել հմտություններ, ուսումնական պրոցես, ստեղծել ստեղծագործական մթնոլորտ, համարժեք, շրջված /շրջուն/ շարադասություն, լեզվի զգացողություն, համեմատության սկզբունք:*

РЕЗЮМЕ

Особенности преподавания французского как второго иностранного языка

Армине Бабаян

В статье рассматриваются особенности преподавания французского языка как второго иностранного языка в вузах в сравнении с английским языком как первого иностранного языка.

Эти особенности классифицированы по разделам языка: фонетики, грамматики, лексики. Каждое теоретическое определение обосновывается практическими примерами, облегчая доступность обучаемого материала.

Ключевые слова: *знание языков, освоение языка, приобретать навыки, учебный процесс, создать творческую атмосферу, эквивалент, обратный порядок слов, языковое чутье, принцип сравнения.*

SUMMARY

The features of teaching French as a second foreign language

Armine Babayan

The article examines the features of teaching French as a second foreign language in higher education institutions, compared with English as the first foreign language.

These features are classified according to the divisions of language: phonetics, grammar, lexis. Each theoretical definition is justified by practical examples, providing to accessibility training material.

Keywords: *knowledge of languages, language acquisition, acquire skills, educational process, a creative atmosphere, equivalent, reverse order of words, linguistic flair, principle of comparison.*